CEO-ների 24-րդ տարեկան հարցում
Հայկական հրատարակությունը

Փոփոխությունը՝ հաջողության գրավական

5,050
CEO-ներ
100 երկրներից

32
CEO-ներ
Հայաստանից

Ապրիլ 2021 թ.



pwc

PwC-ի հարցումն աշխարհի խոշորագույն ընկերությունների CEO-ների (Գլխավոր գործադիր տնօրենների) շրջանում

PwC-ն ամեն տարի անցկացնում է գլոբալ հարցում խոշոր ընկերությունների ղեկավարների շրջանում: Սա PwC-ի հեղինակային հետազոտությունն է, որում ներգրավված են մոտ 5,000 բիզնես ղեկավարներ ամբողջ աշխարհից:

Հետազոտության նպատակն է՝ բացահայտել հիմնական միտումներն ու օրինաչափությունները, որոնք ազդում են կազմակերպությունների ղեկավարների կողմից կատարվող կառավարչական կարևոր որոշումների վրա:

Այս տարի մենք առաջին անգամ պատրաստել ենք հետազոտության հայկական հրատարակություն: Այն ներկայացնում է ավելի մանրամասն տվյալներ Հայաստանում CEO-ների հարցման արդյունքների վերաբերյալ: Մենք այս տվյալները ներկայացնում ենք այլ տարածքների CEO-ների պատասխանների հետ համեմատությամբ:

Գլոբալ հարցման արդյունքները ավանդաբար ներկայացվում են Դավոսում անցկացվող Համաշխարհային տնտեսական համաժողովի տարեկան նստաշրջանում:



Ինգա Շախնազարովա

PwC Արմենիա գործադիր գործընկեր

Վերջին տարին լի էր փորձություններով աշխարհի գրեթե բոլոր երկրների, և հատկապես՝ Հայաստանի համար:

Ընկերությունները հայտնվեցին իրենց ժամանակակից պատմության ընթացքում թերևս ամենամեծ մարտահրավերների առջև. բնակչության գնողունակության անկում, սպառողական վարքի ակնթարթային և էական փոփոխություն, անցում հեռավար աշխատանքի: Այս և մի շարք այլ հանգամանքներ կազմակերպություններին ստիպեցին վերաիմաստավորել հնարավորի իրենց սահմանները:

Հայաստանը 2020 թ. մեկնարկել էր առանցքային տնտեսական ցուցանիշներից մեկի աճով. այսպես, 2019 թ. և 2020 թ. առաջին երկու ամիսների ընթացքում գրանցվել էր ՀՆԱ-ի ռեկորդային աճ Եվրոպայի երկրների համեմատությամբ:

2020 թ. մարտից Հայաստանը բախվեց COVID-19-ի մարտահրավերներին, և այնուհետև՝ պատերազմի հետևանքներին:

Այս տարին վճռորոշ է երկրի վերականգնման համար, և այդ գործընթացի հիմնական շարժիչ ուժերից մեկը պետք է հանդիսանա գործարար ակտիվության վերականգնումը, ըստ ՀՀ Կենտրոնական բանկի և Համաշխարհային բանկի տնտեսական աճի կանխատեսումների:

PwC Արմենիան հավատացած է, որ հատկապես այս փուլում է կարևոր Ձեզ ներկայացնել հարցման արդյունքները, քանի որ, չնայած մարտահրավերներին, Հայաստանի CEO-ները թեև զգուշավոր, սակայն դրական հեռանկարներ են տեսնում մոտ ապագայի վերաբերյալ:



Ալեքսեյ Ռուսանով

Տնօրեն

Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ չնայած Հայաստանի առջև կանգնած մարտահրավերներին, CEO-ները վստահություն ունեն առաջիկա 12 ամիսների և հաջորդ երեք տարիների ընթացքում եկամտի և շահութաբերության աճի առումով:
Այսպես, հարցմանը մասնակցած CEO-ների 88%-ը շատ վստահ կամ որոշ չափով վստահ են առաջիկա երեք տարիների ընթացքում եկամուտների աճի վերաբերյալ:

Ստեղծված իրականությանը հարմարվելու առումով Հայաստանի CEO-ները չափազանց կարևոր են համարում գործառնական ամենաբարձր արդյունավետության ձգտումը, օրգանական աճին հետամուտ լինելը և նոր ապրանքի կամ ծառայության գործարկումը:

Համավարակի արդյունքում Հայաստանում CEO-ների 59%-ը կատարում է կամ նախատեսում է կատարել կազմակերպչական փոփոխություններ, վերանայելով իր գործունեության նպատակները՝ հասարակության մեջ իրենց դերն ավելի լավ արտացոլելու համար:

Հարցվողները նաև հայտնում են ծախսերի արդյունավետության մեծացման, թվային վերափոխման և տվյալների գաղտնիության բարելավման ուղղություններով երկարաժամկետ ներդրումներում զգալի փոփոխություններ կատարելու իրենց մտադրությունների մասին:

PwC Արմենիան սիրով հրավիրում է Ձեզ ծանոթանալ Հայաստանում CEO-ների հարցման արդյունքներին:



1

GRAB
90 Actions
90 Edit
Table
DOW/GOLD U Index
DOW/GOLD U Index : DOW/GOLD
1D 3D 1M 6M YTD 1Y 5Y Max Quarterly
Last Price 16.2314
High on 06/30/99 41.7936
Average 11.4212
Low on 06/30/80 1.3281
40
35
30
25
20

Q6

2020 թ. անկումից հետո տնտեսական աճը չափավոր կբարելավվի՝ գտնում է Հայաստանում CEO-ների գրեթե կեսը, ինչը որոշ չափով ցածր է տարածաշրջանի արդյունքից

Արդյոք կարծո՞ւմ եք, որ համաշխարհային տնտեսական աճը կբարելավվի, կմնա նույնը կամ անկում կապրի



Ծանոթագրություն գծապատկերների ընթերցման համար

Այս շնորհանդեսում ոչ բոլոր սյունավոր և դարսակայունավոր գծապատկերներն են հանրագումարում հավասար 100%, քանի որ տոկոսները որոշ տեղերում կլորացվել են, իսկ որոշ դեպքերում ցուցադրումից դուրս են թողնվել «ոչ մեկը ոչ մյուսը», «այլ պատասխան», «նշվածից ոչ մեկը» և «դժվարանում եմ պատասխանել» պատասխանները:

CEO-ների տեսակետը

Իմ կարծիքով, համաշխարհային տնտեսությունը, հատկապես զարգացած երկրներում, հաջորդ 12 ամսվա ընթացքում կրկին կաճի: Կպահանջվի եւս 5-6 ամիս, մինչ պատվաստանյութը հասանելի կդառնա ամբողջ բնակչության համար:

Վահե Խորանյան

Zeppelin Արմենիա

Համաշխարհային աճի դրական ազդեցությունը Հայաստանի տնտեսության վրա կապված է արտահանման ապրանքների պահանջարկի/գնի բարձրացման հետ, ինչպիսիք են լեռնահանքային արդյունաբերության և գյուղատնտեսական վերամշակման դեպքում, սակայն ներմուծման գների բարձրացումը, մասնավորապես՝ պողպատի և արդյունաբերական այլ ապրանքների համար, կարող է բացասաբար ազդել տեղական պահանջարկի վրա:

Հայկ Շեկյան

Շտիգեն

CEO-ները զգուշավոր են 2021 թ. շահութաբերության և եկամտի աճի հեռանկարների գնահատումներում, սակայն առաջիկա երեք տարվա ընթացքում եկամտի աճի առումով հայտնում են բարձր վստահություն

Որքանո՞վ եք վստահ Ձեր կազմակերպության շահութաբերության և եկամտի աճի հեռանկարների վերաբերյալ առաջիկա 12 ամիսների համար և առաջիկա երեք տարվա համար

Հայաստան



Այնքան էլ վստահ չեմ
Ինչ-որ չափով վստահ եմ
Շատ վստահ եմ

Կենտրոնական և Արևելյան Եվրոպա



Ընկերության աճը խթանելու համար առաջնային գործողություններն են՝ ձգտել գործառնական արդյունավետության, հետամուտ լինել օրգանական աճին և գործարկել նոր ապրանք կամ ծառայություն

Հետևյալ գործողություններից որո՞նք եք նախատեսվում հաջորդ 12 ամիսներին՝ եկամտի աճը խթանելու համար:



CEO-ի տեսակետը

Մեր կազմակերպությունը կշարունակի ներդրումներ կատարել բնականոն բիզնեսում, և մենք նաև նախատեսում ենք նոր արտադրանք և ծառայություններ ներդնել մեր պորտֆելում: Մենք ձգտելու ենք հնարավորինս բարձր մակարդակի վրա պահպանել մեր գործունեությունը:

Հաշվի առնելով Հայաստանի շատ սահմանափակ շուկայի չափերը, և մեր ընկերությունը՝ որպես շուկայի առաջատարը, գտնվում է բոլոր մրցակիցների ուշադրության կենտրոնում, մենք պետք է շարունակենք պահպանել մեր դիրքերը ներդրումների միջոցով և գործադրել ավելի ճկուն մոտեցում՝ ավելացնելով մեր պորտֆելը:

Վահե Խորանյան
Zeppelin Արմենիա

Ընկերություններն իրենց աճը պլանավորելիս՝ չեն նախատեսում անձնակազմի ծավալուն կրճատումներ: Առաջիկա երեք տարիների համար CEO-ների միայն 13%-ն է նախատեսում անձնակազմի չափավոր կրճատում

Ինչպե՞ս է փոխվել Ձեր կազմակերպության աշխատողների թվաքանակը վերջին 12 ամիսների ընթացքում, և ինչպե՞ս եք ակնկալում, որ այն կփոխվի հաջորդ 12 ամիսներին և հաջորդ երեք տարիներին:

Հայաստան



Կենտրոնական և Արևելյան Եվրոպա



Աճի հեռանկարների տեսանկյունից նշվել են հետևյալ առավել կարևոր երկրները. Ռուսաստան, ԱՄՆ, Իրան և Վրաստան

Որո՞նք են այն երկրները/տարածքները, չհաշված Ձեր գործունեության իրականացման երկիրը/տարածքը, որոնք դուք համարում եք ամենակարևորը Ձեր կազմակերպության ընդհանուր աճի հեռանկարների համար առաջիկա 12 ամիսների ընթացքում:



Հայաստանում, տարածաշրջանում և ողջ աշխարհում CEO-ները զգուշավոր գնահատական են տվել իրենց կառավարությունների վերականգնման ծրագրերին

Որքա՞ն հավանական է, որ Ձեր գործունեության իրականացման երկրում/տարածքում կառավարության վերականգնման ծրագիրը արդյունավետ հավասարակշռություն ապահովի կարճաժամկետ տնտեսական կարիքների և երկարաժամկետ բնապահպանական նպատակների հետ:



CEO-ների տեսակետը

Կառավարությունից բիզնեսի ակնկալիքն է ստեղծել անհրաժեշտ շուկայի պայմաններ կայուն բիզնեսի զարգացման համար՝ ֆինանսական շուկաների կայունացման և կանխատեսելի, տրամաբանական և թափանցիկ հարկային կարգավորման համակարգի միջոցով: Մենք գնահատում ենք պետական հարկային աուդիտի համակարգի ընթացիկ բարելավումները:

Արթուր Դավթյան
Կամար ԲԿ

Կառավարությանը անհրաժեշտ է ավելի լավ կազմակերպվածություն և հասարակության և բիզնեսի հետ արդյունավետ երկխոսություն վարելու ավելի ուժեղ կարողություններ, որպեսզի ապահովվի կարճաժամկետ և երկարաժամկետ նպատակների հավասարակշռություն ապահովելու համար:

Հայկ Շեկյան

Աճի վերաբերյալ CEO-ների տեսակետները

2021 թ. համար մենք նախատեսում ենք պահպանել ընթացիկ ֆինանսական կայունությունը 5% հնարավոր աճով: Ենթադրում ենք, որ 2021 թ. տեղական շուկան պատրաստ չէ ավելի լավ արդյունքների:

Արթուր Դավթյան
Կամար ԲԿ

Մեր շուկայի հատվածները աճում են՝ չնայած բացասական զարգացումներին, և մենք ակտիվորեն աշխատում ենք նոր ուղղությունների և հատվածների զարգացման վրա, և մեր գնահատումներով աճը կկազմի մոտ 20-30%:

Հայկ Շեկյան
Շտիգեն

2

Սպառնալիքներ

CEO-ները խիստ մտահոգիչ են համարել հետևյալ սպառնալիքները՝ աշխարհաքաղաքական անորոշություն, փոխարժեքի անկայունություն, քաղաքական անորոշություն, համաճարակներ և սոցիալական անկայունություն

Ստորև ներկայացված՝ տնտեսական, քաղաքական, սոցիալական և բնապահպանական հնարավոր սպառնալիքներից որո՞նք են Ձեզ համար խիստ մտահոգիչ Ձեր կազմակերպության աճի հեռանկարների տեսանկյունից





CEO-ները Հայաստանում մատնանշել են ռիսկերի կառավարման տեսանկյունից հաշվի առնվող երեք գործոն՝ տնտեսական աճի անորոշություն, փոխարժեքի անկայունություն, աշխարհաքաղաքական անորոշություն

Ներկայացված սպառնալիքներից որո՞նք են, կիրառելիության դեպքում, հստակ հաշվի առնված որպես գործոն՝ Ձեր ռազմավարական ռիսկերի կառավարման գործողություններում



CEO-ների տեսակետը

Մենք ավելի մեծ ուշադրություն ենք դարձնում ռիսկերի կառավարմանը: Առավել խորքային վերլուծության համար անհրաժեշտ է երկարաժամկետ ներդրումներ: Արտարժույթի տատանումների պատճառով անհրաժեշտ է ավելի մեծ ուշադրություն դարձնել դեբիտորական պարտքերին և վարկային ռիսկերին:

Վահե Խորանյան,
Zeppelin Արմենիա

Մենք նախատեսում ենք հաղթահարել առկա սպառնալիքները կայուն ֆինանսական ռազմավարության և հաճախորդների համար առավել նպատակային ծառայությունների միջոցով:

Արթուր Դավթյան
Կամար ԲԿ

Համավարակը կենսական դեր է ունեցել բիզնեսի փոփոխությունների կառավարման համատեքստում, հետևաբար ընկերությունները մեծացնում են իրենց ուշադրությունը ռիսկի հանդուրժողականության վերագնահատման նկատմամբ

Ռիսկերի կառավարման գծով Ձեր կազմակերպության մոտեցման համատեքստում, COVID-19 ճգնաժամի արդյունքում որքանո՞վ եք մեծացնում Ձեր ուշադրությունը հետևյալ հարցերի նկատմամբ: [Հայաստան]



Հայաստանում CEO-ները ամենաքիչը մտահոգված են Եվրագոտու ապագայով, շուկայի նոր մասնակիցներով և էներգիայի անկայուն ծախսերով:

Որքանո՞վ եք մտահոգված, եթե առհասարակ մտահոգված եք, նշվածներից յուրաքանչյուրով: ...
[«մտահոգված չեմ» պատասխանների հանրագումարը]



Սպառնալիքների վերաբերյալ CEO-ների տեսակետները

Մենք հուսով ենք, որ իրավիճակը մոտ ժամանակներս կփոխվի, և մենք կարող ենք վերադառնալ բնականոն բիզնեսի մոտեցմանը:

Վահե Խորանյան
Zeppelin Արմենիա

Մենք խթանում ենք ավելի արդյունավետ, պատասխանատու և անվտանգ ապրանքներ և ծառայություններ, որոնք մեր հաճախորդներին ապահովում են ավելի լավ անհատական պաշտպանություն մակրո-մակարդակի ռիսկերից, ինչը նպաստում է հաճախորդների վարքագծի փոփոխությանը, այդպիսով բոլորի համար հեշտ է դառնում դիմակայելը համաշխարհային ռիսկերից յուրաքանչյուրին առանձին վերցրած:

Հայկ Շեկյան
Շտիգեն

3

Ներդրումներ, աշխատուժի և շահառուների ներգրավվածություն

Հայաստանում CEO-ների 59%-ը պատրաստվում է COVID-19 ճգնաժամի արդյունքում կատարել կազմակերպական բնույթի փոփոխություններ՝ կազմակերպության դերը հասարակության մեջ ավելի լավ արտացոլելու համար

COVID-19 ճգնաժամի արդյունքում փոփոխություններ կատարելու՞ եք Ձեր կազմակերպության նպատակում՝ Ձեր կազմակերպության դերը հասարակության մեջ ավելի լավ արտացոլելու համար:



Մարդկային ռեսուրսների ռազմավարության փոփոխությունների շարքում նշվել են արտադրողականության մեծացումը, կատարողական արդյունավետության կառավարումը և հեղինակությունը որպես էթիկական և սոցիալական պատասխանատու գործատուներ

Ձեր կադրային ռազմավարության ո՞ր ասպեկտներն եք ենթարկում փոփոխության, եթե ենթարկում եք, որպեսզի առավելագույնս նպաստեք Ձեր կազմակերպության մրցունակության բարելավմանը:



Համավարակի արդյունքում CEO-ները Հայաստանում երկարաժամկետ ներդրումների էական փոփոխություններ են նախատեսում ծախսարդյունավետ մեխանիզմների, թվային վերափոխման, տվյալների գաղտնիության ուղղությամբ

Ինչպե՞ս եք նախատեսում փոխել Ձեր երկարաժամկետ ներդրումները հետևյալ ոլորտներում առաջիկա երեք տարիների ընթացքում, COVID-19 ճգնաժամի արդյունքում:



... համանման են նաև Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի CEO-ների առաջնահերթությունները՝ թվային վերափոխում, ծախսարդյունավետություն, առաջնորդություն և տաղանդների զարգացում

Ինչպե՞ս եք նախատեսում փոխել Ձեր երկարաժամկետ ներդրումները հետևյալ ոլորտներում առաջիկա երեք տարիների ընթացքում, COVID-19 ճգնաժամի արդյունքում:



Հայաստանում CEO-ների կարծիքով ինչպես բիզնեսը, այնպես էլ կառավարությունը որպես առաջնահերթություն պետք է դիտարկի փորձառու, կրթված և ճկուն աշխատուժը, արդյունավետ հարկային համակարգը

Ձեր կարծիքով, նշված արդյունքներից ո՞ր երեքը պետք է բիզնեսը առաջնահերթություն դիտարկի, որպեսզի հասնի ցանկալի արդյունքների այն երկրում / տարածքում, որտեղ դուք գործունեություն եք իրականացնում: [Հայաստան]



CEO-ների տեսակետը

Մենք կարծում ենք, որ Հայաստանի աշխատաշուկայի հիմնական մարտահրավերներից մեկը մեծ քանակությամբ ոչ որակյալ և ոչ բավարար կրթությամբ աշխատուժն է, ինչպես նաև ոչ պատշաճ վարձատրության համակարգը:

Արթուր Դավթյան
Կամար ԲԿ

Մեր ընկերության հիմնական մարտահրավերն է՝ Հայաստանի արժեթղթերի շուկայում որակավորված մասնագետների պակասը: Մենք ամեն ինչ անում ենք, որպեսզի նրանց վերապատրաստենք ընկերության ներսում:
Հարկային համակարգը ընդունելի մակարդակի վրա է, թեև հարկային վարչարարությունը կարիք ունի բարելավման:

Հայկ Եգանյան
Armenia Securities Exchange

Ներդրումների, աշխատուժի և շահագրգիռ կողմերին ներգրավելու վերաբերյալ CEO-ների տեսակետները

Մեզ համար ընդհանուր առմամբ մեծ խնդիր է ոչ որակյալ աշխատուժը՝ բոլոր սեգմենտներում, ոչ միայն հարկային համակարգում: Մենք վերապատրաստում և ուսուցանում ենք մեր աշխատակիցներին, որպեսզի կախված չլինենք շուկայից: Բայց այս հարցը շատ լուրջ է, և Հայաստանում առկա իրավիճակի արդյունքում հետագայում որակյալ աշխատուժի պակասը շատ ավելի մեծ խնդիր է լինելու:

Վահե Խորանյան
Zeppelin Արմենիա

Covid-19 համավարակով պայմանավորված ճգնաժամը հաղթահարելու համար մենք աշխատում ենք ծախսերի արդյունավետության և գործառնական ծախսերի իջեցման ուղղությամբ: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով թվայնացման համաշխարհային միտումը, մենք կատարել ենք կիբերանվտանգության և տվյալների պաշտպանության բարելավումներ, օրինակ՝ 2021 թ. կգործարկվի մեր նոր կայքը:

Արթուր Դավթյան
Կամար ԲԿ

4

CEO-ների Գլոբալ հարցման մասնակիցների բնութագիր

Որքա՞ն ժամանակ եք զբաղեցնում սույն կազմակերպության CEO-ի պաշտոնը



Ձեր ընկերությունը մասնավո՞ր է, թե հանրային, ցուցակված ընկերություն



Արդյոք Ձեր կազմակերպությունը ընտանեկան ձեռնարկություն է, մասնավոր կապիտալով ապահովված է, առևտրային կոոպերատիվ է, թե կառավարվում է սեփականատիրոջ կողմից



CEO-ների սեռը



Քանի՞ աշխատակից ունի Ձեր կազմակերպությունը:



Որքա՞ն է կազմել Ձեր կազմակերպության հասույթը վերջին ֆինանսական տարում:



5

Հասկացված

Ի՞նչ ակնկալիքներ ունի Ձեր կազմակերպությունը առաջիկա 12 ամիսների ընթացքում (եկամտի աճի և շահութաբերության առումով):

Հայաստան





Կենտրոնական և Արևելյան Եվրոպա



Որքանո՞վ եք համաձայն կամ համաձայն չեք հետևյալ պնդումների հետ: Հարկային քաղաքականության փոփոխությունները՝ ուղղված Ձեր երկրի/տարածքի համար աճող պետական պարտքի խնդրի լուծմանը...

Հայաստան

Կենտրոնական և Արևելյան Եվրոպա



Որքանո՞վ եք մտահոգված, եթե առհասարակ մտահոգված եք, նշվածներից յուրաքանչյուրով:

Գերկարգավորում



Բոլորովին մտահոգված չեմ
Շատ մտահոգված չեմ
Որոշ չափով մտահոգված եմ
Չափազանց մտահոգված եմ

Հարկային բեռի մեծացում



Մատչելի կապիտալի հասանելիություն



Տնտեսական աճի անորոշություն



Որքանո՞վ եք մտահոգված, եթե առհասարակ մտահոգված եք, նշվածներից յուրաքանչյուրով:

Անբավարար հիմնական ենթակառուցվածքներ





Աշխարհաքաղաքական անորոշություն



Փոխարժեքի անկայունություն



Սոցիալական անկայունություն



Որքանո՞վ եք մտահոգված, եթե առհասարակ մտահոգված եք, նշվածներից յուրաքանչյուրով:

Կլիմայի փոփոխություն, շրջակա միջավայրին հասցվող վնաս



Եվրոգոտու ապագան



Հովանավորչություն



Ահաբեկչություն



Որքանո՞վ եք մտահոգված, եթե առհասարակ մտահոգված եք, նշվածներից յուրաքանչյուրով:

Պոպուլիզմ



Առևտրային շահերի բախումներ



Քաղաքականության անորոշություն



Հարկային քաղաքականության անորոշություն



Որքանո՞վ եք մտահոգված, եթե առհասարակ մտահոգված եք, նշվածներից յուրաքանչյուրով:

Տնտեսական անհավասարություն





Նոր մասնակիցների մուտք շուկա



Առանցքային հմտությունների առկայություն



Սպառողական վարքագծի փոփոխություն



Որքանո՞վ եք մտահոգված, եթե առհասարակ մտահոգված եք, նշվածներից յուրաքանչյուրով:

Անկայուն էներգիայի ծախսեր



Տեխնոլոգիական զարգացման տեմպեր



Բիզնեսի նկատմամբ վստահության պակաս



Կիբեր սպառնալիքներ



Որքանո՞վ եք մտահոգված, եթե առհասարակ մտահոգված եք, նշվածներից յուրաքանչյուրով:

Մատակարարման շղթայի խափանում



Ճգնաժամերին արձագանքելու պատրաստվածություն



Ապրանքների անկայուն գներ



Գործազրկություն



Որքանո՞վ եք մտահոգված, եթե առհասարակ մտահոգված եք, նշվածներից յուրաքանչյուրով:

Ապատեղեկատվություն



Ձեր աշխատուժի առողջության և բարեկեցության նվազում



Համաճարակներ և առողջապահական այլ ճգնաժամեր



Ռիսկերի կառավարման գծով Ձեր կազմակերպության մոտեցման համատեքստում, COVID-19 ճգնաժամի արդյունքում որքանո՞վ եք մեծացնում Ձեր ուշադրությունը հետևյալ հարցերի նկատմամբ: [Կենտրոնական և Արևելյան Եվրոպա]



Նորմալ պայմաններում (մինչև COVID-19) ինչպե՞ս կբնութագրեք Ձեր կազմակերպության կանխատեսման ճշգրտությունը հետևյալ ոլորտներում:

Հայաստան

Կենտրոնական և Արևելյան Եվրոպա



Ձեր կարծիքով ազդեցության հետևյալ հիմնական ոլորտներից որո՞ւմ ձեր կազմակերպությունը պետք է ավելին անի ... [Հայաստան]



Ձեր կազմակերպությունում ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 32% -ից ավելին ընտանիքի՞ն է պատկանում:

Ձեր կազմակերպությունը պետական սեփականության կամ աջակցության որևէ ձև ունի՞:



Լրացուցիչ հարցերի կամ ներկայացված տվյալների վերաբերյալ պարզաբանումների անհրաժեշտության դեպքում, խնդրում ենք կապ հաստատել Հայաստանում CEO հարցման թիմի հետ

Ինգա Շախնազարովա

PwC Արմենիա գործադիր գործընկեր

+7 (906) 722-3537

inga.shakhnazarova@pwc.ru

Ալեքսեյ Ռուսանով

Տնօրեն

+374 (99) 93-20-65

alexey.n.rusanov@pwc.com

Արեգ Աբրահամյան

Մենեջեր

+374 (43) 00-12-43

areg.a.abramyan@pwc.com

Շնորհակալություն

pwc.com

© 2021 PwC: Բոլոր իրավունքները պաշտպանված են: Նախատեսված չէ հետագա տարածման համար՝ առանց PwC- ի թույլտվության: PwC-ի անվան տակ հասկանում ենք այլ ընկերություններ, որոնք հանդիսանում են PricewaterhouseCoopers International Limited (PwCIL) համաշխարհային ցանցի մաս, կամ՝ անդամ ընկերություններ, ինչպես ենթադրում է ենթատեքստը: PwC-ի անվան տակ հանդես եկող անդամ ընկերություններից յուրաքանչյուրը հանդիսանում է անկախ իրավաբանական անձ: PwCIL-ը հաճախորդներին որևէ ծառայություն չի մատուցում: PwCIL-ը պատասխանատվություն չի կրում իր անդամ ցանկացած ընկերության գործողությունների կամ բացթողումների համար, ինչպես նաև չի կարող վերահսկել նրանց մասնագիտական դատողության իրականացումը կամ դրանք որևէ ձևով պարտադրել: PwCIL-ի անդամ ոչ մի ընկերություն պատասխանատվություն չի կրում իր ցանկացած անդամ ընկերության գործողությունների կամ բացթողումների համար, ինչպես նաև չի կարող վերահսկել նրանց մասնագիտական դատողության իրականացումը կամ դրանք որևէ ձևով պարտադրել: